ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 15

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԲԷՑ-ԵՄԱՇՁԲ-25/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ «ՇԱՀՈՒՄՅԱՆ-2» 220/110/10 ԿՎ, «ՄԱՐԱՇ» 220/110/10 ԿՎ ԵՎ «ԵՂԵԳՆԱՁՈՐ» 220/110/35 ԿՎ ԵՆԹԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ
«12» դեկտեմբերի 2025թ.
Ժամը՝ 12:00-ին

Հանձնաժողովի նախագահ՝

Շահագործման ծառայության պետ, գլխավոր տնօրենի տեղակալ, գլխավոր ճարտարագետի պարտականությունները կատարող	Ա. Ասատրյան

Հանձնաժողովի անդամներ՝

գլխավոր տնօրենի խորհրդական	Գ. Սարոյան
գլխավոր տնօրենի խորհրդական	Ս. Թևոսյան
գլխավոր տնօրենի խորհրդական	Ա. Պողոսյան
գլխավոր ճարտարագետի տեղակալ	Լ. Ադամյան
գլխավոր ճարտարագետի տեղակալ	Ս. Իգիտբաշյան
շահագործման ծառայության ներդրումային ծրագրերի իրականացման գծով առաջատար ճարտարագետ, ծրագրի ղեկավարի պարտականությունները կատարող	Հ. Հովակիմյան
ծրագրերի իրականացման ծառայության ներդրումային ծրագրերի իրականացման բաժնի գլխավոր մասնագետ	Տ. Պողոսյան
շահագործման ծառայության ներդրումային ծրագրերի իրականացման գծով ճարտարագետ	Ա. Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ծրագրերի իրականացման ծառայության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ	Ն. Կիրակոսյան

1. Տեղեկություն երկու փուլ մրցույթի առաջին փուլի արդյունքում ստացված առաջարկների վերաբերյալ

(Ա. Ասատրյան)

1. Ընդունել ի գիտություն.

1.1 «ԲԷՑ-ԵՄԱՇՁԲ-**25/1**» ծածկագրով երկու փուլ մրցույթի շրջանակներում առաջին փուլի արդյունքում նախաորակավորված մասնակիցներից թվով հինգ մասնակիցների կոմից ներկայացվել են առաջարկներ, որոնց անվանումները ներկայացված են ստորև.

N/N	Մասնակցի անվանումը	ՀՎՀՀ	Էլեկտրոնային հասցե
1	Շանդոնգ Թեյքեյ Փաուեր Ինջինիրինգ ՍՊԸ (Shandong Takei Power Engineering Co., Ltd.)	9137090266443328XX	yuanlonghao@taikaiec.com
2	Կասկադ-Էներգո ՍՊԸ* (Kascad Energo LLC)	4028033363	projects@kenergo.am
3	Չայնա Նեշնլ Էլեքթրիք Ինջենիիրինգ Ընկերություն ՍՊԸ (China National Electric Engineering Co)	91110000101621105B	jiangmeng@cneec.com.cn
4	Էլսվեդի Էլեկտրիկ Թի Էնդ Դի (Elsewedy Electric T&D)	267-166-214	Comemercial-EETD@ELSEWEDY.com
5	ՏՈՋԻԿԳԻԴՐՈԷԼԵԿՏՐՈՄՈՆՏԱԺ ԲԲԸ (OJSC TOJIKGIDROELECTROMONTAJ)	0410006374	ahmadjon.murodaliev@ tgem.tj

**Կասկադ-Էներգո ՍՊ ընկերության կողմից ներկայացվել է միայն առաջին փուլին մասնակցության դիմում և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը: Մասնակցի կողմից տեխնիկական առաջարկ չի ներկայացվել:*

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2025 թվականի մարտի 13-ի թիվ 277-Ն որոշմամբ հաստատված փոփոխությունները՝ երկրորդ փուլի հրավերը տրամադրվելու է նախաորակավորված բոլոր մասնակիցներին՝ անկախ առաջին փուլին հայտ ներկայացնելու հանգամանքից:

Գնահատող հանձնաժողովը մասնակիցների կողմից առաջարկությունները (նկարագրերի առաջարկները) ուսումնասիրելու նպատակով որոշեց ընդհատել նիստը և աշխատանքները շարունակել 17.12.2025 թվականին

2025 թվականի դեկտեմբերի 17-ի նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները

2. Տեղեկություն երկու փուլ մրցույթի առաջին փուլի արդյունքում բանակցությունների անցկացման վերաբերյալ

(Ա. Ասատրյան)

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 84-րդ կետի 2-րդ ենթակետով՝ «ԲԷՑ-ԵՄԱՇՁԲ-25/1» ծածկագրով գնման ընթացակարգի նախաորակավորված բոլոր մասնակիցներին հրավիրել միաժամանակյա բանակցությունների 2026 թվականի հունվարի 30-ին ժամը 12:00-ին (Երևանի ժամանակով) ք. Երևան Զորավար Անդրանիկ 1

հասցեում՝ միաժամանակ հնարավորություն ընձեռնելով բոլոր նախաորակավորակավորված մասնակիցներին տեսակապով միանալ բանակցություններին:

2.2 Միաժամանակյա բանակցություններին ***խորհրդատուի*** կարգավիճակով հրավիրել GOPA Tech GmbH ընկերությանը (Տեխնիկական աջակցության և վերահսկման խորհրդատու) և «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերությանը:

Ընդունել որոշում՝ կողմ-9, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արամ Ասատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Գարիկ Սրոյան

Սարգիս Թևոսյան

Արամ Պողոսյան

Լևոն Ադամյան

Սիմոն Իգիտբաշյան

Հունան Հովակիմյան

Տիգրան Պողոսյան

Արփի Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նարինե Կիրակոսյան